Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Մուշեղ Ղուկասյան, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

2023 թվականի նոյեմբերի 8-12-ը ներառյալ Ռուսաստանի Դաշնություն (քաղաք Իրկուտսկ)

3. Հրավիրող կողմը՝

Իրկուտսկի հայ մշակութային միություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Իրկուտսկի հայ մշակութային միության ստեղծման 30 ամյակի միջոցառմանը մասնակցելու:

Հայ համայնքի հետ աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ ունենալու, ծանոթանալու համայնքի խնդիրներին և ներկայացնելու Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի գործունեությունը, իրականացվող ծրագրերը:

5. Քննարկված թեմաները՝

Երևան-Իրկուտսկ ուղիղ ավիահաղորդակցության հաստատման հնարավորությունը:

Ինչպես կարող են սփյուռքահայերը ներգրավվել Հայաստանի Հանրապետության տարբեր ոլորտներում և ինչպես նրանք կարող են օգնել Հայաստանին:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից իրականացվող ծրագրերին մասնակցության կարևորությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կայացել է հանդիպում Իրկուտսկի մարզպետի խորհրդական Անտոն Խարտովի, մարզպետարանի հասարակայնության կապերի և ազգային հարաբերությունների վարչության պետ Օլգա Կուրիլենկովայի և այլ պաշտոնատար անձանց հետ, որի ընթացքում քննարկվել են հայաստանյան և Իրկուտսկի մարզի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության հնարավոր ուղղությունները, Երևան-Իրկուտսկ ուղիղ ավիահաղորդակցության կարևորությունը և այլ հարցեր և ընդգծվեց այս աշխատանքների իրականացման գործում Իրկուտսկի հայ համայնքի դերը:

Կայացել է հանդիպում Իրկուտսկի հայ համայնքի ներկայացուցիչների և Ռուսաստանի այլ հայկական համայնքներից ժամանած հյուրերի հետ:

Մասնակցել է Իրկուտսկի հայ մշակութային միության ստեղծման 30 ամյակի միջոցառմանը, որի ժամանակ փոխանցել է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի շնորհավորական խոսքը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նպաստել հայաստանյան և Իրկուտսկի մարզի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության հաստատմանը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև աջակցելու փոխադարձաբար տուրիստական այցելությունների հաստատման աշխատանքներում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աջակցել Երևան-Իրկուտսկ ուղիղ ավիահաղորդակցության հաստատմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

15/11/2023